-ՌԱՄԱ մեթոդաբանություն-

Ռեսուրսների արդյունավետ ու մաքուր արտադրությունը (ՌԱՄԱ) կանխարգելիչ բնապահպանական ռազմավարությունների համապարփակ և շարունակական կիրառումն է **գործընթացների, ապրանքների ու ծառայությունների** արդյունավետությունը բարձրացնելու և մարդկանց ու շրջակա միջավայրի համար ռիսկերը նվազեցնելու նպատակով: ՌԱՄԱ նպատակն է արտադրել ավելի քիչ ռեսուրսներով և միաժամանակ նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունները՝ բարձրացնելով ընդհանուր արտադրողականությունը: **Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ)** համար ՌԱՄԱ մեթոդաբանությունն արդյունավետ գործիք է ծախսերը նվազեցնելու, ինչպես նաև ՓՄՁ-ների մրցակցային առավելությունները բարելավելու և էկոլոգիապես մաքուր գործելակերպ կիրառելու համար: Ինչպես նաև ՌԱՄԱ-ն համարվում է ՓՄՁ-ներում շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրման և խթանման արդյունավետ գործիք:

«Կավաշեն» ՍՊԸ

- Շիֆեր արտադրող ընկերություն -

Կազմակերպության մասին

Հասցե՝ Շահումյան փող. 5, Արարատ ք., Արարատի մարզ, Հայաստան, 0602
Հիմնական ապրանքներ՝ ծալքավոր ասբեստ, ցեմենտ, տանիքի ծածկեր
Աշխատակիցների քանակ՝ 45
Հիմնական շուկան՝ Հայաստան

«**ԿԱՎԱՇԵՆ**» ՍՊԸ-ի արտադրությունը կազմում է տարեկան շուրջ 65,000 շիֆեր՝ պատվերի հիման վրա: Հայաստանում արտադրանքը հիմնականում սպառվում է գյուղական վայրերում, որտեղ տանիքների 80%-ը ազբոշիֆերից է: Քանի որ շիֆերի հիմնական տարրը չափազանց դիմացկուն է, այն հաճախ օգտագործվում է որպես ամրացնող բաղադրիչ սոսնձի, շաղախների և հարդարման ցեմենտի մեջ: Բացի այդ, լինելով դիմացկուն կոռոզիայի և եղանակային պայմանների նկատմամբ, այն նաև օգտագործվում է՝ տանիքները պաշտպանելու համար: Շատ դեպքերում ազբեստը կազմում է տանիքի ծածկի միայն 15-30%-ը, որտեղ այն հիմնականում ավելացվում է որպես ամրացնող նյութ: Այսպիսով, վերջնական արտադրանքը 15% ազբեստի փոշու, 5% ջրի և 80% ցեմենտի խառնուրդ է: Տանիքների ծածկի կյանքի տևողությունը մոտ 30 տարի է, իսկ որոշ դեպքերում գերազանցում է անգամ 50 տարին: Բացի մասնավոր տնտեսություններից, ընկերության հաճախորդների թվում են նաև տեղական ինքնակառավարման և պետական լիազոր մարմինները: Ավելի էներգաարդյունավետ արտադրություն ունենալու նպատակով ընկերությունը մասնակցել է ՌԱՄԱ ցուցադրական ծրագրին EaP GREEN-ի շրջանակներում (2013-2017): Այս հրապարակումը ցույց է տալիս ընկերության փորձը, որը զեկուցվել է 2022 թվականին իրականացված մոնիթորինգից հետո՝ ծրագրի ավարտից հինգ տարի անց:

Առավելություններ

- **6 ՌԱՄԱ տարբերակի իրականացում**
- **Էլեկտրաէներգիայի սպառումը կրճատվել է 9.5%-ով**

Նախագծի մոտեցումները

ՌԱՄԱ գնահատումն ուսումնասիրել է արտադրական տարածքը և բացահայտել որոշ ՌԱՄԱ տարբերակներ: Գնահատման հաշվետվության մեջ առաջարկված ՌԱՄԱ ութ տարբերակներից մոնիթորինգի ժամանակաշրջանի վերջում իրականացվել են վեցը: Դրանք օգնեցին ընկերությանը՝ բարձրացնելու ռեսուրսների արդյունավետությունը, դարձնելով արտադրանքն ավելի մրցունակ՝ միաժամանակ ապահովելով և բարելավելով ընկերության տնտեսական, սոցիալական և բնապահպանական արդյունավետությունը:

Առաջարկվող ՌԱՄԱ միջոցառումներից մի քանիսը կենտրոնացած էին նաև աշխատող մեքենաների և մեխանիզմների համակարգված վերանորոգման և վերականգնման վրա (արդյունքում էներգիայի և ջերմության կորստի կրճատում, էլեկտրաէներգիայի համակարգի բարելավում): «Կավաշեն» ՍՊԸ-ն ունեցել է նաև տարածքի լուսավորության և ջեռուցման խնդիրներ: Լուսավորման և ջեռուցման համակարգերն ավելի ժամանակակից ու էներգաարդյունավետ դարձնելու նպատակով ՌԱՄԱ փորձագետները խորհուրդ են տվել օգտագործել լրացուցիչ տարաներ մեկուսացման համար, այդ թվում՝ խողովակաշարեր: 40 կՎտ հզորությամբ արևային ՖՎ վահանակի տեղադրումը նաև օգնեց ընկերությանը նվազեցնելու էներգիայի ծախսերը և նվազագույնի հասցնելու առանց բեռնվածության կորուստները ավելի փոքր հզորության տրանսֆորմատորի միջոցով:

«Կավաշեն» ՍՊԸ-ն, ներդնելով ՌԱՄԱ մեթոդաբանությունը ՌԱՄԱ գործողությունների ծրագրի միջոցով, հասանելի դարձավ տնտեսական և բնապահպանական կենսունակ լուծումներին՝ միաժամանակ ծանոթանալով իր ոլորտում արտադրական նորագույն տեխնոլոգիային և մոտեցումներին: Միջոցառումները նաև օգնեցին բարելավելու կազմակերպության ընդհանուր կատարողականը և իրականացնելու լավ տնտեսվարում՝ շուկայավարումը խթանելու համար: ՌԱՄԱ գնահատման ընթացքում հայտնաբերվել են նաև լրացուցիչ հնարավորություններ: Դրանք մասնավորապես կենտրոնացած էին մինչև 500 կՎտ հզորությամբ արևային ՖՎ վահանակների լրացուցիչ տեղադրման շուրջ՝ ծածկելու ընդհանուր տարեկան սպառումը և հնարավորություն ստեղծելու ցանցին միացված ՖՎ արևային էլեկտրակայանների համար: Ապագայում նման ներդրումը կհանգեցնի այն բանին, որ ընկերության ինքնավար էներգիայի գեներատորները կարող են աշխատել առանց հաշվառման հիմունքներով էլեկտրաէներգիա արտադրելու լիցենզիայի, ընդ որում ամռանն արտադրված էլեկտրաէներգիան հասանելի կլինի ձմռանն օգտագործելու համար:

Պահպանելով ձեռքբերումները

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր առմամբ երկու փուլով իրականացվել է **ՌԱՄԱ 6 տարբերակ**: Ընկերությունը կենտրոնացել էր լավ տնտեսվարման, գործընթացների ավելի լավ վերահսկման, սարքավորումների, տեխնոլոգիայի և արտադրանքի փոփոխությունների վրա:

ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

	Ներդրումներ (եվրո)	Խնայողություններ (եվրո/տարի)	Հետվերադարձի ժամկետ (տարի)
6 ՌԱՄԱ տարբերակներ՝	28,900	7,926	3.6

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	էլեկտրաէներգիա (կՎտժ/տարի)	Թափոններ (տ/տարի)	CO_2 (տ/տարի)
6 ՌԱՄԱ տարբերակներ՝	87,844	20	35.1

Այլ հնարավորություններ

«ԿԱՎԱՇԵՆ» ՍՊԸ-ն զգալիորեն բարելավել է արտադրանքի որակը, աշխատանքի առողջությունը և անվտանգությունը, ինչպես նաև ընդհանուր բնապահպանական ցուցանիշները, շնորհիվ ՌԱՄԱ ցուցադրական ծրագրի: Ընկերությունն այժմ ներդրումներ է կատարում նոր գործարան հիմնելու համար՝ սալաքարի արտադրությունն ընդլայնելու, ինչպես նաև հին արտադրական սարքավորումները վերանորոգելու և ընդհանուր արտադրությունը բարելավելու նպատակով: Բացի այդ, նպատակ կա արդիականացնելու էներգիայի սպառման համակարգերը և օգտվելու վերականգնվող էներգիայի առկա աղբյուրից:

Նման ներդրումները կօգնեն «ԿԱՎԱՇԵՆ» ՍՊԸ-ին մեծացնելու իր արտադրությունը և մուտք գործելու ավելի մեծ շուկաներ: Պարբերաբար իրականացնելով ՌԱՄԱ միջոցառումներ (օրինակ՝ լավ տնտեսվարում, գործընթացների ավելի լավ վերահսկում, սարքավորումների, տեխնոլոգիայի կամ արտադրանքի ձևափոխում)՝ ընկերությունը կունենա էլ ավելի շատ երկարաժամկետ բիզնես օգուտներ, սոցիալական և բնապահպանական գործունեության տեսանկյունից:

ՌԱՄԱ-ի ներդրումը եղել է ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի մաս՝ «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green) (2013-2017) և «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» (2019-2022), որոնք իրականացվել են ՄԱԿԱԶԿ կողմից: Այս համատեքստում «ԿԱՎԱՇԵՆ» ՍՊԸ-ն միացել է ՌԱՄԱ ուսուցման ու աջակցության ծրագրին «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green)-ի և մշտադիտարկվել «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակներում: Հետագա այցելություններ են իրականացվել նաև «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակներում՝ ստուգելու իրականացված ՌԱՄԱ տարբերակները «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green) ծրագրի ավարտից հետո: «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագիրն օգնում է Արևելյան գործընկերության գործընկեր վեց երկրներին պահպանելու իրենց բնական կապիտալն ու բարձրացնելու մարդկանց բնապահպանական բարեկեցությունը՝ աջակցելով շրջակա միջավայրին առնչվող գործողություններին, ցուցադրելով և բացելով ավելի կանաչ աճի հնարավորությունները և ստեղծելով շրջակա միջավայրի ռիսկերն ու ազդեցություններն ավելի լավ կառավարելու մեխանիզմներ: Ավելին իմանալու համար այցելե՛ք **www.eu4environment.org**:

Այս հրապարակումը լույս է տեսել Եվրոպական միության աջակցությամբ: Հրապարակման բովանդակությունը բացառապես ՄԱԿ ԱԶԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Միավորված ազգերի կազմակերպության արդյունաբերական զարգացման կազմակերպություն
Տիկին Տատյանա Չերնյավսկայա
ԵՄ-ն շրջակա միջավայրի համար Ծրագրի ղեկավար
Հեռ: +43 1 26 0 26 5520
էլ: t.chernyavskaya@unido.org

Կովկասի ՏԲԿ
Հայաստանի ազգային գրասենյակ
Այգեստան փ.7, շենք N 2, 0010, Երևան
Կայք: www.recp.am
Հեռ: +374 115 75 148